ԵՀՀ Աշխատաոճեր. ինչպե՞ս եք իրագործում ձեր աշխատանքային օրը, մարտ-մայիս 2020

«Զում» հասկացությունն ընդգրկում է ցանկացած այլ կոլեկտիվ հեռակա հաղորդակցության միջոց (ֆեյսբուք սուրհանդակ և այլն)։

1 Եթե կա կոնկրետ ազդակ գործընկերոջից (կամ շտապ գործ երեկվանից)՝ նախ և առաջ զբաղվում եմ դրանով։



91% (21)
Այո

0% (0)
Ոչ

0% (0)
Չգիտեմ

9% (2)
Այլ

8.84
Standard Deviation

23
Responses

Հիմնականում զբաղվում եմ առաջնահերթ գործով, որը սահմանվում է իմ և թիմի կողմից։ Այս ընթացքում սովորել եմ անմիջական ազդակներին, որոնք իմ գնահատման այդքան շտապ չեն միանգամից չարձագանքել՝ այն առումով, որ չեմ թողնի իմ գործը և անցնեմ դրան։ Այլ կքննարկեմ տվյալ անձի հետ համատեղ հարմար ժամանակահատված։

Փորձում եմ շարժվել ըստ առաջնահերթությունների։

2 Մեկ գործն ավարտելուց հետո, ունեմ պլանավորած գործերի շարք (գրի առած), անցնում եմ հաջորդին։



87% (20)
Այո

4% (1)
Ոչ

0% (0)
Չգիտեմ

9% (2)
Այլ

8.26
Standard Deviation

23
Responses

Ոչ միշտ է պլանավորվածին հերթ հասնում, քանի որ առաջանում են շատ այլ չպլանավորված գործեր կամ առաջադրանքներ։

Հերթականությամբ, ըստ նոր գործերի կարևորության։

3 Դժվար գործն ավարտելուց հետո հանգիստ եմ տալիս ինձ, մտածում հաջորդ փուլի մասին։



43% (10)
Այո

30% (7)
Ոչ

0% (0)
Չգիտեմ

26% (6)
Այլ

3.63
Standard Deviation

23
Responses

Ժամանակ չի լինում

Լավ կլինի, ժամանակ ունենալ դադարի, բայց երբեմն գործերի ծավալը հնարավորություն չի տալիս դադար վերցնել և հանգիստ պլանավորվել մյուս քայլերը։

Եթե այլ շտապ գործ չի լինում՝ այո։

Երբեմն

գործը գիտի

Կախված է ծանրաբեռնվածությունից, եթե կա այլ շտապ աշխատանք, անցնում եմ դրան, առանց դադարի։

4 Սիրում եմ երկար ու դժվար գործն անել միանգամից, թեկուզև դա տևի օրեր։



43% (10)
Այո

17% (4)
Ոչ

0% (0)
Չգիտեմ

39% (9)
Այլ

4.02
Standard Deviation

23
Responses

գերադասում եմ նման գործն ընդմիջել, այլ թեթև կարճատև գործով

Նայած թե ոնց են դասավորվում մյուս դժվար/շտապ գործերը:

Կախված է գործի բնույթից և ժամանակային սահմանափակումներից։ Եթե ժամանակ կա և բոլորովին նոր բան պետք է ստեղծվել, ժամանակ է հարկավոր մտքերն հավաքելու ու փոնարկելու համար։ Երևակայությունն ու ինովացիան երբեմն շատ ժամանակ են պահանջում։ Ընդհանուր առմամբ փորձում եմ անել միանգամից, եթե այլ շտապ բաներ չունեմ։ Բայց եթե փոքր շտապ գործեր կան անելու, անում եմ, որպեսզի միտքս ազատվի բարդ աշխատանքի համար։

Կախված առաջնահերթությունից

Համատեղում եմ այլ գործերի հետ։

ըստ հրատապության

միշտ գործերն անում եմ ըստ առաջնահերթությունների

միանշանակ չէ, կախված է գործի բնույթից, դեդլայնից, տրամադրությունից, այլ հանգամանքներից

Եթե աշխատանքը տեքստերի հետ է կապված, նախընտրում եմ մի քանի օր տրամադրել դրան, քանի որ ամեն նոր օր ավելի թարմ ուղեղով ես կարողանում աչքի անցկացնել նախորդ օրվա արած աշխատանքը

5 Սիրում եմ երկար ու դժվար գործն անել մաս-մաս, ընդմիջելով այլ գործերով։



35% (8)
Այո

39% (9)
Ոչ

4% (1)
Չգիտեմ

22% (5)
Այլ

3.11
Standard Deviation

23
Responses

Եթե առաջնահերթ չէ

Համատեղում եմ այլ գործերի հետ։

նորից, կախված հրատապությունից

Հիմնականում անում եմ մինչև վերջ, նորից անդրադառնալով դրան որոշ ժամանակ անց, եթե կարիք կա

Եթե աշխատանքը կենտրոնացում է պահանջում ապա ոչ, նախընտրում եմ ողջ օրը տրամադրել դրա կատարմանը։

6 Ավելի հեշտ է, երբ ազդակ կա գործընկերոջից, քան երբ ինքս պիտի որոշեմ, հիմա ի՞նչ անեմ։



9% (2) Այո	39% (9) Ոչ
4% (1) Չգիտեմ	48% (11) Այլ
4.32 Standard Deviation	23 Responses

հեշտ է, բայց ես չեմ սպասում, նախաձեռնում եմ իմ հաջորդ քայլը, հետո իր հետ կիսվում

սովորաբար չի լինում իրավիճակ երբ մտածես հիմա ինչ անեմ, և ազդակները՝, և քո պլանավորած գործերը շատ շատ են։

Պատահաում է, որ ազդակն է հեշտացնում, պատահում է, երբ ինքս պիտի որոշեմ։

Երկու դեպքն էլ լինում է։

երբեմն, կախված է գործի բնույթից, բայց հիմնականում ինքս եմ որոշում

Դե նայած իրավիճակից։

Էլի կախված է գործից։ Ես սիրում եմ թիմային պլանավորում գործերի և առաջնահերթությունների սահմանում։ Սակայն բուն գործի ընթացքում չեմ սիրում միկրոմենեջմենթը։ Միկրոմենեջմենթը շատ հաճախ կոտրում է իմ ոգևորությունն անել ավելին և նոր սահմաններ ու գործունեության ոլորտներ նախանշել։ Մենեջմենթի առումով, իմ կարծիքով ամենարդյունավետը ամեն մարդուն կոնկրետ գործունեության ոլորտներ տրամադրելն է ամենաքիչն որոշ ժամանակով, ու հասկանալ արդյոք այդ մարդուն անհրաժեշտ է ամեն ինչ ասել, թե ինքն կարող է ծրագրել ու անել իր պարտականության շրջանակում ընկնող գործերը։ Ամեն գործում կարևորը վստահությունն է գործընկերոջ նկատմամբ և ազատության տրամադրումը։ Սահմանափակված մարդն երբեք չի կարող ճախրել։ :Ճ

Երբեմն։

Ավելի հեշտ է գնալ ըստ սահմանված առաջնահերթությունների, Գործընկերոջից եկող ազդակը կարող է փոխել առաջնահերությունները, բայց ընդամենը դա

Մեծ մասամբ գիտեմ, թե ինչ պիտի անեմ, ազդակներով և առանց։

Քանի որ անելիքներն անընդհատ ավելանում են, գործընկերոջ ազդակից անկախ կարողանում եմ ինքնակազմակերպվել։

7 Աշխատանքի բաժանում ենք անում թիմում, դա հեշտացնում է որոշելը, ով ինչով զբաղվի։



83% (19)
Այո

0% (0)
Ոչ

4% (1)
Չգիտեմ

13% (3)
Այլ

7.73
Standard Deviation

23
Responses

երբեմն

մեծամասամբ մեր անելիքները նախապես բաժանված է թիմի անդամների մեջ

Նորից՝ ըստ առաջնահերթության

8 Երբեմն մոռանում եմ պլանավորվածը, առաջնայինը, ժամկետներ բաց թողնում, քանի որ գործը շատ է։

9% (2)
Այո

78% (18)
Ոչ

4% (1)
Չգիտեմ

9% (2)
Այլ

7.08
Standard Deviation

23
Responses

Դժվար է կարևոր ժամկետը բաց թողնել, մեռնելով է, անում ենք։

մեկ-մեկ պատահում է

9 Երբեմն չգիտեմ, ինչով զբաղվեմ, եթե ազդակ չկա։



4% (1)
Այո

83% (19)
Ոչ

0% (0)
Չգիտեմ

13% (3)
Այլ

7.73
Standard Deviation

23
Responses

այդ դեպքերում ամեն բան անում եմ՝ ազդակ ստանալու համար

Դեռ չի եղել որ գործը թեթևանա

Չեմ մտաբերում դեպք, որ չիմանամ՝ ինչով զբաղվել։

10 Պլանավորելիս տեղ եմ տալիս անսպասելի ազդակներին (երբ, ասենք, նոր ու շտապ գործ է մեջտեղ գալիս), իմանալով, որ դրանք կլինեն, ուրեմն հիմիկվա գործը պետք է պլանավորել այնպես, որ անսպասելին չխանգարի պլանավորվածի՝ ժամանակին իրագործմանը։



57% (13)
Այո

17% (4)
Ոչ

9% (2)
Չգիտեմ

17% (4)
Այլ

4.26
Standard Deviation

23
Responses

Երբեք չէի մտածել դրա մասին, բայց ճիշտ է ազատ ժամ թողնել անսպասելի ազդակների համար։

Դե հնարավորինս, բայց մեկ-մեկ լինում են դեպքեր, որ խանգարող ազդակները ստիպում են որոշակիորեն դանդաղեցնել հիմնական անելիքը։

Եթե ժամանակ ունես քո գործին համատեղ ունենալ այլ ժամանակ՝ այլ ազդակների համար։ Շատ լավ է։ Շնորհավորում եմ։ Շատ հաճախ հազիվ հասցնում ենք մեր գործերն անել։

ոչ միշտ

11 Գործս ընդմիջում եմ այլ, ոչ գրասենյակային զբաղմունքներով, դա հեշտացնում է գործը լավ կատարելը։



52% (12)
Այո

13% (3)
Ոչ

0% (0)
Չգիտեմ

35% (8)
Այլ

4.6
Standard Deviation

23
Responses

Ընդմիջելով հնարավոր չէ, քանի որ անընդհատ գործի հետ կապված հարցեր են առաջանում։

երբեմն, բայց ոչ ամեն օր

Մեկ-մեկ, բայց շատ անգամ երկար հնարավոր չի լինում։

Աշխատանքային օրերին և ժամերին գրեթե երբեք չեմ կարողանում ուրիշ բանով զբաղվել։ Սակայն շաբաթ-կիրակի եթե հնարավոր է լինում փորձում եմ այլ թեմաներով ու այլ տիպի գործով զբաղվել, դա ինձ ոգևորում է, որ գործից դուրս այլ արտադրանք կամ արդյունք էլ եմ կարողանում տալ։

Գործը ընդմիջում եմ այլ զբաղմունքներով, սակայն դա, ընդհակառակը, դժվարացնում է գործը լավ կատարելը

Երբեմն, երբ ժամանակ է լինում։

Գործի ընդմիջոումը կատարվում է երբեմն անհրաժեշտաբար, քանի որ ուղեկցվում է տնային աշխատանքների պահանջներով ևս

Եթե ժամանակ է լինում

12 Գործս ընդմիջում եմ այլ, ոչ գրասենյակային զբաղմունքներով, իմ պայմաններում այլ կերպ անհնարին է։



26% (6)
Այո

57% (13)
Ոչ

4% (1)
Չգիտեմ

13% (3)
Այլ

4.55
Standard Deviation

23
Responses

Լավ չեմ հասկանում այս հարցի երկրորդ մասը

Մեկ-մեկ, բայց շատ անգամ երկար հնարավոր չի լինում։

Առաջնահերթություններ սահմանելիս և պլանավորելիս այլ գործերը նույնպես պլանավորվում են այնպես, որ ոչ մեկը շատ չտուժի։ Արդյունքում տուժում եմ ես .ՃՃՃՃ

13 Գործս լրիվ առանձին է այլ, ոչ գրասենյակային զբաղմունքներից, իրար չեն խառնվում։



48% (11)
Այո

22% (5)
Ոչ

22% (5)
Չգիտեմ

9% (2)
Այլ

3.27
Standard Deviation

23
Responses

Չհասկացա հարցը։

խառնվում են, մեծ ջանքեր են պահանջվում և պլանավորման մեծ հմտություններ, գործերը հասցնելու համար

14 Անկարևոր գործերը (իմակները, որոնք պետք է կարդալ, թեև իմ գործից հեռու են) չափից շատ ժամանակ են խլում։



52% (12)
Այո

30% (7)
Ոչ

9% (2)
Չգիտեմ

9% (2)
Այլ

4.15
Standard Deviation

23
Responses

Առհասարակ մեր առկա գործին մի մեծ չափաբաժնով ավելացել է կոռոնավիռուսի հետ կապված ինֆորմացիան, դրա հետ կապված աշխատանքը և այլն ու այդ ամեն ինչին հետևելը շատ ժամանակ է խլում։

Այդքան էլ չէ, եթե աշխատանքային օրերին են ուղարկվել։ Ընթացքում կամ օրվա ավարտին հնարավոր է լինում որքան պետք է ծանոթանալ այլ գործերին։ Սակայն եթե իմեյլների տարափ է լինում գիշերը կամ ոչ աշխատանքային օրերին դա ներվային ու լարված վիճակ է ստեղծում։ Դրա համար խնդրում եմ որքան հնարավոր է ոչ աշխատանքային օրերին իմեյլներ չուղարկել։ Դա իրականում ոչ թե բարձրացնում է արդյունավետությունը այլ հակառակը։ Թողեք մարդիկ հանգստանան, իսկ եթե դուք նույնիսկ գործ եք անում, անպայման չէ ամբողջ աշխարին իմանա։

15 Անկարևոր գործերը (իմակները, որոնք պետք է կարդալ, թեև իմ գործից հեռու են) խանգարում են իմ գործն անելուն։



26% (6)
Այո

39% (9)
Ոչ

17% (4)
Չգիտեմ

17% (4)
Այլ

2.05
Standard Deviation

23
Responses

Երբեմն, միտքս շեղում են։ Հետո ստիպված եմ լինում վերակենտրոնանալ։ Սակայն վերջին կանոնները իմակների հետ կապված օգնում են։

երբեմն ստացվող նամակնեոն ու մեսիջները ֆեյսբուքում այնքան շատ են լինում, որ չեմ հասցնում գործն ավարտել ու ստիպված աշխատում եմ երեկոյան ժամերին, երբ նակաների "տեղատարափն" ավարտվում է (երբեմն ասելով նկատի ունեմ շաբաթվա մեջ մեկ կամ երկու օր մաքսիմում)

Եթե նպատակային է ուղարկվել ամբողջ իմեյլ լիստին, ապա ոչ։ Բայց օրինակ ինչ-որ մարդկանց հետ հանդիպում նշանակելուց, եթե այդ մեյլինգ լիստից ընդհամենը երեք հոգի են մասնակցելու, ապա կարելի է միայն իրենց ուղարկել։ Ընդհանուր առմամբ դեմ չեմ շատ իմեյլին, եթե նպատակը հասկանալի է. տեղեկացնելու համար, ռեսուրսի կիսում, հետաքրքիր նյութ։ Սակայն շատ հաճախ ոչ նպատակային իմեյլները գերակշռում են։

Գուցե, ուղղակի հավելյալ լարվածություն են առաջացնում

16 Անկարևոր գործերը (իմակները, որոնք պետք է կարդալ, թեև իմ գործից հեռու են) օգնում են տեղյակ լինել գրասենյակի աշխատանքից, գործս ճիշտ անել:



61% (14)
Այո

0% (0)
Ոչ

17% (4)
Չգիտեմ

22% (5)
Այլ

5.12
Standard Deviation

23
Responses

երբմեն, շատ հազվադեպ

ոչ միշտ

"Գործս ճիշտ անել"-ու պահը չէի ասի:

Տես վերևի պատասխանը:

մասամբ օգնում են, մասամբ շատ ժամանակ տանում, մանավանդ հիմա,երբ մեյլերի քանակը բնականաբար ավելի է շատացել

17 Ինձ համար զումով հանդիպումներին ավելի հեշտ է մասնակցելը, քան անձնական ներկայության։



22% (5)
Այո

57% (13)
Ոչ

9% (2)
Չգիտեմ

13% (3)
Այլ

4.32
Standard Deviation

23
Responses

Միանշանակ չէ, հարցեր կան անձնական հանդիպման ժամանակ շատ ավելի արագ են քննարկվում և լուծվում։

Երկուսն էլ հեշտ է

պլանավորման տեսանկյունից երբեմն որոշ հանդիպումներ, օրինակ՝ փորձագիտական, ավելի արագ է կազմակերպել առցանց։

18 Ինձ համար սկզբունքային տարբերություն չկա, զումով, թե անձնական ներկայության հանդիպում։



30% (7)
Այո

48% (11)
Ոչ

4% (1)
Չգիտեմ

17% (4)
Այլ

3.7
Standard Deviation

23
Responses

Այո, մանավանդ եթե զրուցակիցը արդեն ծանոթ է:

Զումով ավելի շատ ժամանակ է պահանջվում, քան անձնական ներկայության դեպքում։Մասնակիցների ռեակցիան պարզ չէ, քանի որ հիմնականում կամերաները անջատված են, և մի շարք այլ դժվարություններ, ինտերակտիվության պակաս, և այլն։

կախված հանդիպման բնույթից..

Զումով միշտ չի, որ ստացվում է արտահայտվել, կամ մտածում եմ իմաստ չունի/կարևոր բան չի ասելու համար։ Հոգնում են մարդիկ զումից, ժամանակը խնայելու համար ավելի լավ է միայն շատ էական բաները ներկայացնել։ Անձնական ներկայության պարագայում կոնտակտը ավելի հեշտ է ստացվում, "կարևոր չի ասածս", "պահը անցավ" ֆիլտրը մեղմ է աշխատում։)

19 Զումով թիմային պլանավորումն ավելի հեշտ է։



17% (4)
Այո

52% (12)
Ոչ

0% (0)
Չգիտեմ

30% (7)
Այլ

4.38
Standard Deviation

23
Responses

Պլանավորելը այո, բայց խորքային քննարկումները այդքան հեշտ չի ստացվում։

Դե անձնական շփումը ավելի հեշտ է, քանի զումովը, քանի որ վերջինիս դեպքում ազդակները հստակ ու ժամանակին ստանալու խնդիր կա։

Զումով հավաքվելն է հաճախ բոլորով դժվար կազմակերպել մարդկանց զբաղվածության պատճառով, բայց հենց որ հառաքվում են շատ հեշտ է։

Տարբերություն չկա։

ճիշտ ասած տարբերությոուն չկա

Զումով պլանավորման աշխատանքը ավելի արագ է ստացվում, բայց մտագրոհներ, ստեղծագործական տարրեր ունեցող քննարկումները զումով արդյունավետ չեն։

տարբերություն չկա, 2 դեպքում էլ կարողանում ենք լավ պլանավորել մեր աշխատանքը։

20 Ձումով շահառուի հետ պլանավորումն ավելի հեշտ է։

30% (7)
Այո

39% (9)
Ոչ

17% (4)
Չգիտեմ

13% (3)
Այլ

2.38
Standard Deviation

23
Responses

Երբեմն

տարբերություն չկա

տարբերություն չկա

21 Ձումով կոլեկտիվ թրենինգն ավելի հեշտ է։



17% (4)
Այո

61% (14)
Ոչ

13% (3)
Չգիտեմ

9% (2)
Այլ

4.82
Standard Deviation

23
Responses

տարբերություն չկա

կախված է թրենինգի բնույթից

22 Զումով շահառուին խորհրդատվությունն ավելի հեշտ է։



26% (6)
Այո

30% (7)
Ոչ

26% (6)
Չգիտեմ

17% (4)
Այլ

1.09
Standard Deviation

23
Responses

Այո, մանավանդ եթե շահառուն այլ երկրում է գտնվում:

Տարբերություն չկա։

տարբերություն չկա

գուցե հեշտ է, բայց արդյունավետ է, թե ոչ՝ հարց է

23 Զումով ելույթն ավելի հեշտ է։



17% (4)
Այո

52% (12)
Ոչ

4% (1)
Չգիտեմ

26% (6)
Այլ

4.02
Standard Deviation

23
Responses

չեմ կարծում, քանի որ դժվար է խոսողին զգալ լսողների արձագանքը։

Ինչ-որ տեղ այո, քանի որ հանրային միջոցառումը այնքան էլ հանրային չէ, բայց նաև ոչ, քանի որ շատ անգամ ասես պատի հետ ես խոսում, երբ բոլորի ձայները կտրած են։

Միանշանակ չի, կախված է ելույթի բնույթից։ Եթե տեխնիկական կետերը ստեղծված են, ապա մեծ մասամբ նույն է։

տարբերություն չկա

Մի քիչ։

տարբերություն չկա

24 Զումով իմ մասնակցայնությունն ավելի հեշտ է դրսևորվում։



13% (3)
Այո

65% (15)
Ոչ

17% (4)
Չգիտեմ

4% (1)
Այլ

5.45
Standard Deviation

23
Responses

տարբերություն չկա

25 Զումով մասսայական միջոցառում անելն ավելի հեշտ է։



22% (5)
Այո

57% (13)
Ոչ

13% (3)
Չգիտեմ

9% (2)
Այլ

4.32
Standard Deviation

23
Responses

Նայած, մասսայական ասվածը պետք է հարմարեցնել զումին։ Հարմարեցնելուց հետո հնարավոր է լինում

Էլի կախված է մարդկանց քանակից։

26 Իմ կարծիքով, զումով շահառուին խորհրդատվություն տալն իր համար ավելի արդյունավետ է։



26% (6)
Այո

30% (7)
Ոչ

35% (8)
Չգիտեմ

9% (2)
Այլ

2.28
Standard Deviation

23
Responses

Դե նայած որտեղից է գալիս շահառուն։

տարբերություն չկա

27 Զումով խորհրդատվությունը պայմանավորում է հավելյալ աշխատանք՝ շահառուին նախնական առաջադրանք, կամ խորհրդատվությունից հետո առաջադրանք, որը կարող է չլիներ, եթե խորհրդատվությունը լիներ անձնական ներկայությամբ։

52% (12)
Այո

9% (2)
Ոչ

30% (7)
Չգիտեմ

9% (2)
Այլ

4.15
Standard Deviation

23
Responses

Երկու դեպքում էլ պետք է լինում նախնական առաջադրանք տալ

Դա կարող է լինել նաև անձնական ներկայությամբ հանդիպման ժամանակ

28 Վերջին փուլի կոմունիկացիոն կանոններն օգնեցին, հեշտացրին կազմակերպվելս։

39% (9)
Այո

17% (4)
Ոչ

35% (8)
Չգիտեմ

9% (2)
Այլ

2.86
Standard Deviation

23
Responses

Եթե բոլորը հետևեն գուցե։ Սակայն քչացավ սոցիալական ցանցերով գործնական հարցերն որոշ չափով, որն օգնում է մասամբ։

Միևնույնն է, աշխատանքային/ոչ աշխատանքային՝ տոն օրերի հարցը, կարծում եմ, որ լիովին չի լուծվել։

29 Ժամանակ եմ հատկացնում նաև մտածելու՝ ապագայի ռազմավարական հնարավոր զարգացումների վերաբերյալ, փնտրելու ծրագրերի նոր գաղափարներ, երևակայելու նոր անելիքներ, որոնք կարող էին օգտավետ լինել ԵՀՀ-ին և հասարակությանը։



65% (15)
Այո

9% (2)
Ոչ

17% (4)
Չգիտեմ

9% (2)
Այլ

5.4
Standard Deviation

23
Responses

Այո, միշտ, անկախ ամեն ինչից ապագայի պլանավորելը անընդհատ իմ անելիքների մեջ ա մտնում

Կարծում եմ դա նաև աշխատանքի ընթացիկ մաս է

30 Եթե 29-ին պատասխանել եք «այո», կիսվեք, խնդրեմ, եթե կա գաղափար։

պետության համար հաղորդակցության կանոնների համակարգերի զարգացում, ատելության և ագրեսիվ խոսքի (ոչ թե կարելի է չի կարելիի) այլ հենց հասցրած վնասի, դրանց տեսակների, ազդեցությունների վերլուծություն, ներկացացում, ֆբ-ին ատելության և ագրեսիվ արձագանքների, ռեակցիաների նվազեցմանն ուղղված թիփերի, առաջարկությունների հավաքում ներկայացում, հասարակությունների, մարդկանց կազմակերպություններին քաղաքականությունից կտրելու, նրանց անհատական կամ վարքագծային կապերի վերլուծություններ և ինքնուրույնության անկախ գործունեության զարգացմանն ուղղված ծրագրեր։

Այս պահին չեմ ուզում գրել։

Դե ռազմավարական առումով ճգնաժամային արդյունավետ կառավարման խնդիր կա Հայաստանի մակարդակով և ցանկալի կլիներ երևակայել այնպիսի ծրագրեր, որոնք միտված կլինեին նման իրավիճակներում արագ ու կոնկրետ գործողություններ անելուն։

Երևի կա, բայց դեռ չի հասունացել։

չեմ ցանկանում այստեղ գրել, հետո կերևա

կարծում COVIDից հետո մարդիկ ավելի արդյունավետ կաշխատեն, այս պայմանները բոլորիս սովորեցրել են ճիշտ "working from home" mode-ին։

Օնլայն տարածքում նոր գործիքների կիրառում, որը կդյուրացնի և բազմազան կդարձնի թիմային աշխատանքը։

Տարբեր մտքեր կան, օրինակ մեկը՝ շուտով հավասարության մասին օրենքը ընդունելուց հետո կարիք կլինի տեղեկատվական քարոզչական աշխատանքներ իրականացնել հանրության հետ, բացի այդ նաև արդարադատության ակադեմիայում, ոստիկանության կրթահամալիրում, քաղ. ծառ-ի պարտադիր վերապատրաստումների դասընթացներում ներառելու համար կազմել խտրականության առարկա և ապահովել պարտադիր դասընթացներում այդ առարկայի ընդգրկումը։

COVID-19-ից առաջացած խնդրներին լուծումներ տալու ուղղությամբ

այս հարցաշարը տարածել այլ կազմակերպություններին

31 Հեռահար աշխատելիս գործն ավարտելը սովորաբար ավելի երկար է տևում։



70% (16)
Այո

26% (6)
Ոչ

4% (1)
Չգիտեմ

0% (0)
Այլ

6.34
Standard Deviation

23
Responses

32 Հեռահար աշխատելիս գործընկերոջ հետ անելիքը համաձայնեցնելը սովորաբար ավելի երկար է տևում։



52% (12)
Այո

35% (8)
Ոչ

4% (1)
Չգիտեմ

9% (2)
Այլ

4.49
Standard Deviation

23
Responses

Միանշանակ չէ, կախված է գործընկերոջից։ Մեծ մասամբ ես հասկացել եմ մարդիկ որքան responsive էին գրասենյակում, այնքան էլ կամ գուցե է ավելի շատ են այս պայմաններում։ Իսկ մյուսներն համապատասխանաբար հակառակը։ Երբեմն փոքր թիմով համաձայնեցումներն հիմա ավելի էֆֆեկտիվ և արագ են դարձել։ Որոշումների կայացումն ավելի է արագացել կոնկրետ այն թիմում, որում ես եմ աշխատում։

ուղակի ավելի perfectionist ես դառնում և ուզում ես ավելի կատարելագործված արդյունք ստանալ, ինչը միգուցե ավելի շատ ժամանակ է պահանջում։

33 Ի՞նչ ունեք ավելացնելու:

վակուումային տարրեր կան այս ժամանակաշրջանում. համատարած վախի և կյանքի կռվի պայմաններում մեր առաջնայնությունները պահպանելը երբեմն իրականությունից կտրված են թվում

Իհարկե այսօր հնարավոր է դարձել անխափան աշխատել հեռահար, բայց կցանկանայի վերադառնալ նախկին աշխատանքային գրաֆիկին՝ գնալ գրասենյակ։

Շնորհակալություն, այս պահին բան չունեմ ավելացնելու, քանի որ նախորդ սըրվեյում ամեն ինչ մանրամասն գրել եմ։

Էհ։

Չունեմ:

Կուզեի հնարավորության դեպքում ներքին աշխատանքային թրեյնինգներ կամ սեսիաներ ունենանք թիմակիցներին հետաքրքրող թեմաներով։ Մի փոքր մարդկային շփման կարիք կա, ոչ շատ աշխատանքային։ Բայց եթե օրինակ մեկն ունի հետաքրքիր սեսիա, որ կուզենա աշխատակիցների համար կիսվել, հետաքրքիր կլիներ։ Բայց առանց որևէ պարտադրանքի, որ չդիտարկվի որպես առաջադրանք։ Շնորհակալություն։

Առողջություն

անհամբեր եմ , երբ պիտի էս "հարինքը" վերանա .Ճ

Կարծում եմ, որ հեռահար աշխատանքը ընդհանուր առմամբ չի նվազեցրել աշխատանքի արդյունավետությունը։ Միայն հանրության հետ աշխատանքի կազմակերպումը ավելի դժվար է դարձել՝ դասընթացներ կամ կլոր-սեղան քննարկումները։ Չումը այս պարագայում լիարժեք փոխարինող չի կարող լինել։